ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1965 Общественные науки

Հ. Ն. Մակիրչյան

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ցարիզմի ազգային ճնշման քաղաքականությունը և եռամյա իմպերիալիստական պատերազմը ծայր աստիճան քայքայել էին ինչպես Անդրկովկասի, այնպես էլ նրանում բնակվող ազգային փոքրամասնությունների տնտեսությունը։ Ազգային այդ փոքրամասնությունները գտնվում էին ազգամիջյան գժտությունների և փոխադարձ անվստահության պայմաններում։ Այդ վիճակը պահպանվեց Ռուսաստանի փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխություններից հետո, երբ Անդրկովկասում առաջացան բուրժուա-նացիոնալիստական իշխանություններ։ Հիրավի, նշված ժամանակաշրջանում ազգային բախումներն ու ընդհարումներն ավելի սուր ու ավելի արյունալի բնույթ ստացան։ Անդրկովկասյան հակահեղափոխական կառավարությունները խստորեն հալածում էին իրենց երկրների ազգային փոքրամասնություններին։

Հետևելով ադրբեջանական մուսավաթիստների և վրացական մենշևիկների օրինակին, դաշնակցականները ևս, Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների նկատմամբ, վարում էին շովինիստական քաղաքականություն։

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանը Սովետական Սոցիալիստական Հանրապետություն հռչակելու հետ միասին, Հայաստանի հեղափոխական կոմիտեի դեկլարացիան հայտարարեց, որ հաղթական ինտերնացիոնալի առաջին հնչյունների հետ ընդմիշտ կանհետանա գոյություն ունեցող ազգային պառակտումների ուրվականը և կստեղծվի բոլոր աշխատավորների եղբայրություն։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հենց առաջին իսկ օրերից խնդիր դրեցին վերացնելու հին կարգերից ժառանգություն մնացած ազգային ներհակությունները, խաղաղացնել ազգայնական կրքերը և հաստատել փոխադարձ վստահություն։

Համաձայն 1922 թ. վիճակագրական տեղեկությունների, ՀՍՍՌ բնակչության ազգային կազմը եղել է հետևյալը.

Ազգություն	Թվական կազմ	Կազմում էին ռեսպուբլիկայի ողջ բնակչության տոկոսը
Հայեր	671450	85,9
Ադրբեջանցիներ	76550	9,8
Ռուսներ	19176	2,4
Քրդեր	8650	1,1
Հույներ	2554	0,3
Ասորիներ	2161	0,27
Այլ ազգային փոքրամաս.	468	0,005
Ընդամենը	750999	14,1

Այս տվյալները վկայում են, որ 1921—1922 թթ. ՀՍՍՌ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների թիվը եղել է 109549 մարդ, որը կազմել է հանրապետության բնակչության 14,1 տոկոսը[1]։

Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունները տնտեսական և կուլտուրական զարգացման տեսակետից բաժանվում էին երեք խմբի։

Առաջին խմբին էին պատկանում ռուսները և հույները, որոնք գտնվում էին զարգացման ավելի բարձր աստիճանում, քան մնացած ազգային փոքրամասնությունները։

---

1 ՄԼԻ վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, ց. 1, գ. 1170, թ. 28։

Երկրորդ խումբը կանգնած էր զարգացման ավելի ցածր աստիճանի վրա քան ռուսները և հույները։ Դրանք աղրբեջանցիները և ասորիներն էին։ Երրորդ խումբը գտնվում էր տնտեսական և կուլտուրական զարգացման ամենացածր մակարդակի վրա։ Դրանք քրդերն էին, որոնց մեջ դեռևս բավական ուժեղ կերպով պահպանվել էր նահապետական-ֆեոդալական կենսաձևը, և նրանց անցումը տնտեսության սոցիալիստական ձևերին կապված էր զգալի դժվարությունների հետ։

Ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքը արդյունավետ կազմակերպելու համար, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հաշվի առան յուրաքանչյուր ազգային փոքրամասնության տնտեսական, կուլտուրական զարգացման աստիճանը և նրանց կենցաղի ու սովորությունների առանձնահատկությունները։ Առանց այդպիսի մոտեցման հնարավոր չէր անշեղորեն կենսագործել լենինյան ազգային քաղաքականությունը։ Հաշվի առնվեց նաև այն, որ մենշևիկների, դաշնակների և մուսավաթիստների ազգային շովինիստական քաղաքականությունն ուժեղացրել էր անտագոնիզմն Անդրկովկասի աշխատավորների միջև, որի պատճառով այնտեղ բնակվող ազգային փոքրամասնությունները հիմնական ազգությունների նկատմամբ ցուցաբերում էին անվստահություն։ Հեղափոխության հաղթանակից հետո Վ. Ի. Լենինը նշել է, որ անհրաժեշտ է առանձնահատուկ զգուշություն ցուցաբերել ազգային զգացմունքի նկատմամբ և հոգատարությամբ կիրառել ազգերի իրավահավասարության սկզբունքը, ուժեղացնելով թույլ ազգերին ցույց տրվող օգնությունը։

«...Առանձնապես պետք է զգույշ լինել,—նշել է Լենինը,—զանազան ազգերի վերաբերմամբ, որովհետև չկա ավելի վատ բան, քան ազգի անվստահությունը»[2]։

Կոմունիստական կուսակցության գլխավորությամբ Հայաստանի կառավարությունը ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող քաղաքականության հիմքում դրեց այն սկզբունքները, որոնք 1917 թ. ընդունվել էին «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում», այն է՝ ժողովուրդների իրավահավասարություն և ազգային փոքրամասնությունների ու խմբերի ազատ զարգացում։ Կուսակցությունը ստեղծեց բոլոր պայմաններն այդ սկզբունքի կենսագործման համար։ Ազգային փոքրամասնություններին վստահություն ներշնչելու, նրանց իրավահավասարությունը գործնականում կենսագործելու համար, Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի որոշմամբ ստեղծվեցին կուսակցական և պետական հատուկ օրգաններ, որոնք պետք է աշխատանքներ կազմակերպեին ազգային փոքրամասնությունների հետ, մասնակից դարձնելով նրանց հանրապետության սոցիալիստական շինարարությանը։

1921 թ. հոկտեմբերին ՀԿՊ Կենտրոնական կոմիտեի որոշմամբ, Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնին կից ստեղծվում է աղրբեջանական սեկցիա։ Սեկցիան ղեկավարում էր ինչպես աղրբեջանցիների, այնպես էլ ազգային մյուս փոքրամասնությունների հետ տարվող աշխատանքները։ Սեկցիայի գործունեությունը ընթանում էր հետևյալ ուղղությամբ՝ ստուգում էր ինչպես աղրբեջանցիների, այնպես էլ ազգային մյուս փոքրամասնությունների թվական կազմը և ուսումնասիրում նրանց տնտեսական և քաղաքական դրությունը. հետևում էր ազգային փոքրամասնություններով բնակեցված վայրերում կուսակցական և սովետական շինարարությանը. ազգային փոքրամասնությունների աշխատավորներից առաջադրում է կուսակցական և սովետական աշխատողներ. ղեկավարում է ազգային փոքրամասնությունների կուսակցականների շրջանում կատարվող աշխատանքները և հետևում նրանց կուլտուրական շինարարության խնդիրների կատարմանը[3]։

Հայտնի է, որ դաշնակցական կառավարության ազգայնական քաղաքականության հետևանքով Հայաստանում բնակվող աղրբեջանական բնակչության մեծամասնությունը 1918—1920 թթ. թողեց իր բնակավայրը և գաղթեց տարբեր երկրներ։ Սովետական կարգերի հաղթանակից հետո, 1920—1923 թթ. նրանք վերադարձան Հայաստան և հիմնականում բնակություն հաստատեցին այն գավառներում և գյուղերում, որտեղ մի քանի տարի առաջ բնակվում էին։ Այդպիսի վայրերից էին Երևանի, Էջմիածնի, Լենինականի, Նոր Բայազետի, Զանգեզուրի, Լոռի-Փամբակի, Դիլիջանի, Դարալագյազի և Մեղրու գավառները։

Հայաստանի կառավարության որոշմամբ վերադարձող բոլոր աղրբեջանցիները իշխանության տեղական օրգանների կողմից ստացան նյութական և բարոյական օգնություն՝ իրենց քայքայված ու ավերված տնտեսությունն արագորեն վերականգնելու համար։

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 202։

3 ՄԼԻ վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, գ. 795, թ. 50—72։

1922 թ. ՀԿՊ Մեղրու շրջկոմից գրում են ՀԿՊ ԿԿ-ին, որ նոր վերադարձած բոլոր ադրբեջանցիները սովի էին մատնված և գտնվում էին ցնցոտիների մեջ։

Վերադառնալով Սովետական Հայաստան՝ նրանք տեղավորվեցին իրենց գյուղերում, և սովետական իշխանության օժանդակությամբ կարգի բերեցին իրենց ավերված տուն և տնտեսություն[4]։

Սակայն 1921—1922 թթ. ադրբեջանցիների բնակության համար ստեղծվել էին որոշ դժվարություններ։ Հանրապետության քայքայված տնտեսությունը և սակավահողությունը հնարավորություն չէր տալիս նոր վերադարձած տնտեսություններին անմիջապես բավարարելու բնակարաններով և հողով։ Բացի դրանից, սովետական իշխանության հաստատման առաջին ամիսներին Հայաստան վերադարձած ադրբեջանական գյուղացիական բազմաթիվ տնտեսություններ զբաղեցնելով իրենց նախկին գյուղերը, օգտագործում էին հողային մեծ տարածություններ, որի պատճառով ստեղծվել էին առատ հողերով և փոքր բնակչությամբ բնակավայրեր։ Անհրաժեշտ էր կիրառել հողային ճիշտ քաղաքականություն, որպեսզի նոր վերադարձող ադրբեջանական տնտեսությունները ունենային բնակվելու համար նորմալ պայմաններ։ Այդ նպատակով Հայաստանի կառավարության որոշմամբ հողառատ ադրբեջանական գյուղերից ամբողջական հողամասեր հատկացվեցին սակավահող գյուղերին, որտեղ բնակություն հաստատեցին նոր վերադարձող ադրբեջանցիները։

Հայաստանի կառավարությունը որոշում է նաև մի շարք սակավաբնակ բնակավայրերի տնտեսությունները տեղավորել ավելի նպաստավոր աշխարհագրական պայմաններ ունեցող գյուղեր։ Ադրբեջանական մանր ու սակավաբնակ գյուղերի համախմբումը նպաստավոր պայմաններ ստեղծեց նրանց տնտեսության արագ վերականգնման համար։ Այս միջոցառումների շնորհիվ աստիճանաբար սկսեցին հաղթահարվել եղած դժվարությունները։ Ադրբեջանցի աշխատավորության տնտեսությունը վերականգնելու համար, 1921 թ. Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հատուկ շրջաբերականով դիմում են հանրապետության կուսակցական և սովետական օրգաններին տեղերում ստեղծելու օգնության կոմիտեներ։ Դրա նպատակն էր օգնել լծկաններ և գյուղատնտեսական գործիքներ չունեցող չքավոր գյուղացիներին, այդ թվում և նոր վերադարձող ադրբեջանցիներին՝ իրենց հողաբաժինները մշակելու համար։ Սովետական Հայաստանի կառավարությունը ադրբեջանական աշխատավորությանը տրամադրեց սերմացու և լծկան անասուններ։ Այդ առթիվ, 1922 թ. հողժողկոմատը Հայաստանի Կենտգործկոմին գրում է, որ գավառային և տեղամասային գործկոմները մեծ սիրով ընդունել են նոր վերադարձող ադրբեջանցիներին և տնտեսությունները վերականգնելու համար նրանց տրամադրել շինափայտ, լծկան անասուններ, սերմացու և անհրաժեշտ այլ միջոցներ[5]։

Տնտեսական օգնության հետ միասին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը հրատապ ուշադրություն էր դարձնում նաև ադրբեջանցիների շրջանում տարվող քաղաքական, դաստիարակչական աշխատանքներին։ Այդ ժամանակ ադրբեջանցիների մեջ կուսակցական աշխատանք էին կատարում Ն. Էֆենդիևը, Մ. Քյազումովը, Քյազումովան, Մոնիշևը, Օմերովը, Հուսեինովը, Մ. Վելիբեկովը, Յուսուֆ-Զադեն, Սադիխովը, Զեյմալովը, Ռիզաևը և ուրիշներ[6]։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունն որոշմամբ ադրբեջանական սեկցիան, սկսած 1921 թ., ադրբեջանական վայրերում պարբերաբար հրավիրում է անպարտիական գյուղացիական համագումարներ, կոնֆերանսներ, խորհրդակցություններ, ուր քննարկվում են գյուղացիության կարիքների և պահանջների վերաբերյալ շատ հարցեր։ 1922—1923 թթ. մուսուլման անկուսակցականների համագումարներ են տեղի ունենում Իջևանի, Կրասնոսելսկի, Զանգեզուրի, Երևանի և Բայազետի գավառների ադրբեջանական բնակավայրերում։ Այդ համագումարներում և կոնֆերանսներում լայնորեն քննարկվում են ազգային փոքրամասնությունների նկատմամբ սովետական իշխանության վարած քաղաքականության, սովետական երկրի ներքին և արտաքին կյանքի վերաբերյալ զանազան հարցեր։

Հանրապետության շատ կուսակցական աշխատողներ իրենց ելույթներում ցույց էին տալիս, որ սովետական իշխանությունը ազգային փոքրամասնությունների համար ստեղծել է ազատ զարգացման բոլոր հնարավորությունները։ Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հանրապետության ադրբեջանական բնակչությունը վերջնականապես համոզվեց, որ սովետական իշխանությունը իր հուսալի օգնականն ու պաշտպանն է։

---

4 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 278, թ. 49։

5 Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 112, գ. 4, թ. 86։

6 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 2, թ. 17։

Այսպես, օրինակ, 1921 թ. Բաշգյանոիում հրավիրված ադրբեջանցի աշխատավոր գյուղացիության համագումարը, որին մասնակցում էին նաև Կոտայքի և Միլի-Դարայի շրջանների աշխատավոր գյուղացիների ներկայացուցիչները, ողջույնի նամակ ուղարկեց ՀԿՊ ԿԿ-ին և ՀՍՍՌ ԺԿՍ-ին։ Նամակի մեջ ասված է. «Մենք հավատացած ու համոզված ենք, որ կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը հիմք են դնում բոլոր ժողովուրդների աշխատավոր մասսաների եղբայրական կապին, առանց ազգի և կրոնի խտրության։ Մենք՝ ադրբեջանցի աշխատավորներս չենք խնայի մեր ուժերը թե ու թիկունք հանդիսանալու աշխատավորության պաշտպան սովետական իշխանությանը։ Մեր աշխատանքով կվերաշինենք մեր երկիրը, որի վրա ծածանվում է բոլոր աշխատավորների հաղթանակը որոշող կարմիր դրոշը»[7]։

Այսպիսով, Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության հոգատարության ու օգնության շնորհիվ աստիճանաբար վերականգնվեց Հայաստանում բնակվող ադրբեջանցիների քայքայված տնտեսությունը։ Գյուղատնտեսության վերականգնման համար, Հայաստանի գյուղկոոպկենտրոնը շքավոր ու միջակ գյուղացիությանը սկսեց միավորել կոոպերացիայի տարբեր ձևերի մեջ, վարկավորեց և օգնեց նրանց անհրաժեշտ գույքով։ Այս բոլորը նպաստեց ադրբեջանական գյուղերում արտադրական կոոպերացիայի զարգացմանն ու ամրապնդմանը։ Հայաստանի կառավարությունը գյուղատնտեսական բանկի միջոցով կոոպերացիայի մեջ ընդգրկված գյուղացիներին բաց էր թողնում վարկ՝ գյուղատնտեսական գործիքներ, սերմացու և լծկաններ ձեռք բերելու համար։ Լայն աշխատանքներ կատարվեցին ադրբեջանական գյուղերում առևտրա-սպառողական կոոպերացիան ընդարձակելու համար։

1924—1925 թթ. բոլոր տեսակի կոոպերացիաների մեջ ընդգրկված էին շուրջ 5000 ադրբեջանական տնտեսություններ[8]։

Կոոպերացիայի միջոցով աստիճանաբար վերականգնվեց ադրբեջանցիների քայքայված տնտեսությունը և բարելավվեց աշխատավորների նյութական դրությունը։ Սովետական Հայաստանի տերիտորիայում բնակվում էին նաև ռուս վերաբնակիչները (մալականներ)[9]։

Մինչև սովետական կարգերի հաղթանակը նրանք ունեին հողային արտոնություններ և գտնվում էին տնտեսական զարգացման ավելի բարձր աստիճանում, քան մնացած ազգային փոքրամասնությունները։

Սովետական իշխանությունը վերացրեց ցարիզմի ազգարային քաղաքականության հետևանքով ստեղծված հողային անարդարությունները։ Ելնելով հանրապետության սակավահողության պայմաններից, Հայաստանի հողժողկոմատը ստիպված էր ռուս վերաբնակիչների հողառատ գյուղերից որոշ տարածություններ կտրել և տրամադրել հարևան սակավահող գյուղերին։ Բայց դա կատարվեց այնպես, որպեսզի չտուժին աշխատավորական զանգվածները։ Հողային վաղեմի արտոնություններից զրկվեցին մեծ մասամբ նախկին կուլակները, վաշխառուները և աղանդավորների հոգևոր առաջնորդները, որոնք իրենց քայքայիչ գործունեությամբ ցանկանում էին ապակողմնորոշել աշխատավորությանը։ Աղանդավորների «մարգարե» առաջնորդները սկսեցին բոյկոտի ենթարկել աշխատավորների շրջանում տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքները։ Խրիթ-ընթերցարանները նրանք անվանում էին «Սատանայի դրասենյակներ» և երիտասարդությանն արգելում հաճախել այնտեղ[10]։

Իրենց կրոնական ֆանատիզմի պատճառով ներքին Ախտայի և Ելենովկայի տեղամասերի աղանդավորները հրաժարվեցին զինվորական ծառայությունից։ 1921 թ. հոկտեմբերի 24-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը քննարկեց ռուս աղանդավորների շրջանում տարվող աշխատանքների վիճակը։ Կենտրոնական կոմիտեն նշեց, որ աղանդավորների դժգոհության սոցիալական հիմքն այն է, որ նրանք զրկվել են հողային վաղեմի արտոնություններից։ Կենտկոմի նախագահությունը անհրաժեշտ գտավ ուժեղացնել քաղաքական, դաստիարակչական աշխա-

---

7 «Խորհրդային Հայաստան», 1921, հուլիսի 16, № 128։

8 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 166, թ. 13—17։

9 19-րդ դարի 40—50-ական թվականներից Ռուսաստանի կենտրոնական հողագործական նահանգներից՝ Տամբովից, Տուլայից և Վորոնեժից ցարական կառավարությունը դեպի Անդրկովկաս, այդ թվում և Արևելյան Հայաստան էր տեղափոխում ու բնակեցնում հազարավոր ռուս վերաբնակիչների։ Ցարիզմն իր գաղութային քաղաքականությունը կենսագործելու համար որպես պատրվակ օգտագործել էր այդ վերաբնակիչների կրոնական աղանդավորությունը։ Հայաստանում բնակվող մալականները հիմնականում բաժանվում էին 4 կրոնական խմբերի։ «Պոստոյանիններ», «սուբոտնիկներ», «պրիգուններ» և «բապտիստներ»։

10 «Կոմունիստ», 1921, էջ 62—63։

տանքները ռուս-վերարնակիչների շրջանում, երիտասարդությանը ազատել հոգևորականության ազդեցությունից և մասնակից դարձնել ռեսպուբլիկայի սոցիալիստական շինարարությանը[11]։

Այդ նպատակով 1922—1924 թթ. ռուս վերարնակիչներով բնակեցված վայրերում անց են կացվում անպարտիական գյուղացիական համագումարներ, կոնֆերանսներ և խորհրդակցություններ, որտեղ սովետական իշխանության ներքին քաղաքականության, հողային հարցի և զինվորական ծառայության վերաբերյալ լսվում են բազմաթիվ զեկուցումներ։ Այդ ժողովներում լայնորեն բացատրվում է, որ սովետական իշխանությունը իր հողային քաղաքականությամբ պաշտպանում է գյուղական չքավորների և միջակների շահերը, որ հավասար հողաբաժանության կիրառումը նպատակ է հետապնդում բավարարել հողազուրկ գյուղական տնտեսություններին հողով։

Կուսակցության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ ուժեղացվեց նաև դաստիարակչական աշխատանքները երիտասարդության շրջանում։ 1921 թ. կուսակցական և կոմերիտական բջիջներ ստեղծվեցին ռուս աղանդավորներով բնակեցված վայրերում։ Ազգային փոքրամասնությունների երիտասարդության քաղաքական դաստիարակության հարցը դարձավ կուսակցության կարևորագույն խնդիրներից մեկը։ 1924 թ. ՀԿՊ Կենտրոնական կոմիտեն նորից քննարկեց ռուս աղանդավորների հետ տարվող աշխատանքների վիճակը։ Կենտկոմի որոշմամբ կարգավորվեցին ներքին հողաբաժանության հետ կապված վեճերը, կանոնավորվեցին ուսումնական աշխատանքները դպրոցներում և արմատապես բարելավվեց կուլտուր-լուսավորական աշխատանքների վիճակը[12]։

Ինչպես արդեն նշել ենք, ռուս վերարնակիչները ունեին համեմատաբար զարգացած տնտեսություն, քան ազգային մյուս փոքրամասնությունները։

1923—1924 թթ. Լոռի-Փամբակի ռուսական գյուղերում արդեն կային 20-ից ավելի կաթնարտելներ։ Բավական հաջողություններ ունեին «Ուղբայրություն», «Աշխատասեր», «Զարյա», «Լուսարաց», «Վերածնունդ», «Ինտերնացիոնալ», «Լուկաշևն» կաթնարտելները։

Այդ ժամանակ բոլոր տիպի կոոպերացիաներում ընդգրկված էր մալական բնակչության 47,76 տոկոսը[13]։ Անասնապահությունը զարգացնելու համար հողժողկոմատը հարմար արոտավայրեր հատկացրեց ռուս վերաբնակիչների գյուղերին։ 1925 թ. Ղարաքիլիսայում տեղի ունեցած ռուս աղանդավորների դյուղերի ակտիվի ռեսպուբլիկական խորհրդակցությունը նշեց, որ լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ ամրապնդվել է մալական բնակչության տնտեսությունը։ Նրանց մեծ մասը ընդգրկված է ռեսպուբլիկական և արտադրական կոոպերացիաների մեջ[14]։

Ինչպես արդեն նշել ենք, Սովետական Հայաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների մեջ տնտեսական և կուլտուրական անմխիթար վիճակում էին գտնվում քրդերը։ Դաշնակների տիրապետության շրջանում, երբ բորբոքվել էին ազգայնական կռիվները, քրդերի մեծ մասը հեռացավ Հայաստանից։ Սովետական կարգեր հաստատվելուց հետո այդ քրդերը կրկին վերադարձան Հայաստան և բնակություն հաստատեցին Երևանի և Ալեքսանդրապոլի գավառներում։ Կարճ ժամանակ անց Հայաստանում արդեն գոյություն ունեին քրդական 33 և խառը բնակեցված՝ հայ-քրդական 17 գյուղեր[15]։

Հետագայում է՛լ ավելի ուժեղացավ քրդերի վերադարձը Սովետական Հայաստան։ Եթե 1921 թ. Հայաստանում կային մոտ 9759 քրդեր, ապա 1925 թ. նրանց թիվը հասավ 15 հազարի[16]։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հսկայական միջոցներ էին տրամադրում քրդերի տնտեսության վերականգնման և զարգացման համար։ 1922—1925 թթ. Լենինականի գավառի քրդական մի շարք գյուղերում կազմակերպվում են փոխօգնության կոմիտեներ, որոնց օգնությամբ աղքատ գյուղացիներին որպես սերմացու բաց է թողնվում 1500 փութ ցորեն[17]։

1922—1925 թթ. Հայաստանի Կենտգործկոմը մի շարք միջոցառումներ մշակեց բոլոր քրդերին նստակյաց դարձնելու համար։ Քրդերի որոշ արոտավայրերի ոռոգման հարցը լուծելու

---

11 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 17, թ. 20։

12 Նույն տեղում, ց. 7, գ. 99, թ. 69։

13 Նույն տեղում, ց. 4, գ. 292, թ. 43։

14 ՄԼԻ-ի վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, ց. 1, գ. 285, թ. 20։

15 Նույն տեղում, գ. 1170, թ. 34։

16 Վրացական ՍՍՌ պետարխիվ, փ. 607, ց. 2, գ. 3457, թ. 22—29։

17 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 353, թ. 55—56։

համար 1922 թ. Հայաստանի կառավարությունը բաց թողնց 26 հազար ռուբլի։ Հետագայում այդ նպատակով հատկացվող գումարը հասավ տարեկան 55 հազար ռուբլու[18]։ 1925 թ. Հայաստանի հողժողկոմատի որոշմամբ քոչվոր քրդերը նստակեցության անցնելու համար ստացան բավարար քանակությամբ հող և վարկեր, նույն թվականի վերջին այդ նպատակի համար բաց թողնվեց 32 հազար ռուբլու երկարատև վարկ[19]։

Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության միջոցառումները ջերմորեն ընդունվեցին քուրդ աշխատավորության շրջանում։ 1925 թ. դեկտեմբերի 30-ին էջմիածնի գավառում քրդերի համագումարը մի հեռագիր հղեց ՍՍՌՄ ԿԳԿ-ի նախագահ Մ. Ի. Կալինինին։ Հեռագրում ասված է. «Մենք հաստատուն կերպով որոշել ենք կռիվ մղել մեր ցեղական կենցաղի մնացորդների դեմ և անցնել նստակյաց կյանքի։ Նախկին ցեղապետերի փոխարեն մենք այժմ ունենք գյուղխորհուրդներ, որոնք պաշտպանում են չքավորների ու միջակների շահերը և պայքարում են սովետական իշխանության ամրապնդման համար»[20]։

Այսպիսով, Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության քաղաքականության շնորհիվ 1921—1925 թթ. վերականգնվեց ազգային փոքրամասնությունների քայքայված տնտեսությունը, սովետական պետության օգնությամբ բավական բարելավվեցին ազգային փոքրամասնությունների աշխատավորության նյութական պայմանները։ Այդ հագամանքը նպաստեց նաև ազգաբնակչության աճմանը։ Ըստ 1926 թ. մարդահամարի տվյալների, ՀՍՍՌ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների ընդհանուր թիվը կազմում էր 145,699 մարդ[21]։

Հայաստանում սովետական իշխանության առաջին տարիներին ազգային փոքրամասնությունների աշխատավոր զանգվածները դարձան հանրապետության հասարակական և քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցը։ Ազգային փոքրամասնություններով բնակեցված վայրերում ստեղծվեցին գյուղական սովետներ, իշխանության տեղական օրգանների ընտրություններում ապահովվեց ազգային փոքրամասնությունների ներկայացուցչությունը, պայմաններ ստեղծվեցին դատավարությունը, գործավարությունը նրանց ազգային լեզուներով վարելու համար։ 1922 թ. ազգային փոքրամասնություններով բնակեցված գյուղերի սովետները համալրվեցին նրանց աշխատակիցներով։

Երևան քաղաքում, Աղբարում, Կարմիր գյուղում կային ժողովրդական դատարաններ, որտեղ դատավարությունը տեղի էր ունենում ադրբեջաներեն լեզվով։ Այնտեղ, որտեղ հնարավորություններ չկային ստեղծելու ազգային դատարաններ և դատախազություններ, դատական նիստերը անց էին կացվում թարգմանիչների միջոցով։ Բոլոր կոմիսարիատներում և կենտրոնական հիմնարկներում ստեղծվեցին թարգմանական բյուրոներ։ Հայաստանի Կենտգործկոմի 1924 թ. մայիսի 11-ի որոշմամբ ազգային փոքրամասնություններով բնակեցված վայրերում տեղական մարմինները բնակչության համար պարտադիր որոշումները, կարգադրությունները ու հայտարարությունները հրապարակում էին ազգային փոքրամասնությունների լեզուներով[22]։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը պատշաճ ուշադրություն ու հոգատարություն ցուցաբերեցին նաև ազգային փոքրամասնությունների կուլտուրական շինարարության նկատմամբ։ Հեղափոխության հաղթանակից հետո լայն թափ հաղորդվեց դպրոցական ցանցի ծավալմանը։ Ազգային փոքրամասնությունների շրջաններում կուլտուրական շինարարությունը ղեկավարելու համար 1922 թ. ՀՍՍՌ լուսժողկոմատին կից ստեղծվեց ազգային փոքրամասնությունների բյուրո, որի կազմի մեջ մտան ռուսների, ադրբեջանցիների, քրդերի, հույների և ասորիների ներկայացուցիչներ։ ՀՍՍՌ լուսավորության օրգանները ձեռնամուխ եղան ազգային փոքրամասնությունների դպրոցների կազմակերպման և մանկավարժական կադրերի պատրաստման դժվարին աշխատանքներին։

1921 թ. Հայաստանի և Ադրբեջանի լուսժողկոմատների միջև կայացվեց փոխադարձ համաձայնություն՝ դասագրքերի, ուսումնական ծրագրերի և մեթոդական ձեռնարկների փոխանակության վերաբերյալ։ Այդ կապակցությամբ Հայաստանի լուսժողկոմատի աշխատակից Ջհանգիր Ալեքպեր-Բեկովը ուղարկվեց Բաքու՝ Հայաստանի ադրբեջանական դպրոցների համար դասագրքեր, ուսումնական ծրագրեր և մեթոդական գրականություն ընտրելու համար[23]։

---

18 Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, ֆ. 112, գ. 1749, թ. 50։

19 Նույն տեղում, ց. 2, գ. 1466, թ. 74։

20 ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 215, թ. 2։

21 «Խորհրդային Հայաստան», 1926, № 29։

22 ՄԼԻ վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, ց. 1, գ. 609, թ. 36։

23 ՀՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԼԻ, ֆ. 122, ց. 1, գ. 44, թ. 17։

1925—1926 ուսումնական տարում Հանրապետությունում արդեն գործում էին 107 ադրբեջանական դպրոցներ, որտեղ սովորում էին 4000-ից ավելի աշակերտներ[24]։

1921 թ. հայկական տառերի օգտագործման հիման վրա քրդագետ Հակոբ Ղազարյանը (Լապո) մշակեց և կազմեց քրդական այբուբենը, իսկ 1921 թ. կազմեց «Շամս» վերնագրով քրդերեն այբբենարանը։ 1921—1922 ուսումնական տարում Ալեքսանդրապոլի և Էջմիածնի քրդաբնակ վայրերում բացվեցին 8 քրդական դպրոցներ, որտեղ սովորում էին 250—300 երեխաներ[25]։

Լազոյի ստեղծած այբուբենը խոշոր դեր խաղաց Հանրապետության քուրդ բնակչության ազգային մշակույթի զարգացման գործում։ Այն բարձր գնահատվեց նաև արտասահմանյան քրդական բազմաթիվ գործիչների կողմից։ Ֆրանսիայում բարձրագույն կրթություն ստացած հայտնի քուրդ ցեղապետ Բյամլ-Բեյլ Բադր խան բեկ Ամեր Բոթեյանը այդ կապակցությամբ նշել է.

«Սովետական իրավակարգը գուցե ոչ մի ժողովրդի այնքան պատմական մեծ անփոխարինելի բարիք չարավ, որքան քուրդ ժողովրդին։ Նա բաց արավ մեր մանուկների համար լեզուն, նա բուժեց մեր մտքի կույր աչքերը, նա վառեց մեր քաղաքակրթության ջահը, նա միջոց և հնարավորություն տվեց մեզ քաղաքակիրթ ժողովուրդների շարքը մտնել։ Ես լսեցի քուրդ մանկան բերանից իր մայրենի լեզվի թոթովանքները, քնքուշ մատները մայրենի լեզվի դասագրքի վրա սահեցնելով։ Այլևս քուրդ ազգը չի մեռնի։ Փառք քաղաքակրթության ջահընկալ սովետական իշխանությանը»[26]։

Ազգային փոքրամասնությունների մեջ ռուս-մալականները կուլտուրական զարգացման տեսակետից գտնվում էին, իհարկե, ավելի բարենպաստ պայմաններում։ Այդ պատճառով էլ նրանց հետ տարվող կուլտուրական աշխատանքները անց էր կացվում առանց լուրջ դժվարությունների։ 1925 թ. մալականների գյուղերում գործում էին առաջին և երկրորդ աստիճանի 25 դպրոցներ և մեկ յոթնամյա դպրոց, որտեղ սովորում էին 2000-ից ավելի աշակերտներ և գյուղական երիտասարդներ[27]։

Անհրաժեշտ կուլտուրական ուժերի պակասությունը լուրջ դժվարություններ էր ստեղծել Հայաստանի տերիտորիայում փոքր տոկոս կազմող ասորիների և հույների շրջանում տարվող կուլտուրական աշխատանքների բնագավառում։ Ասորիների և հույների շրջանում կուլտուրական շինարարությունը ծավալելու նպատակով Անդրկովկասյան երեք հանրապետություններում կատարվեց նյութական միջոցների կենտրոնացում, ձեռնարկվեցին ընհանուր հրատարակչական աշխատանքներ։ 1922 թ. Հայաստանի և Վրաստանի լուսժողկոմատների միացյալ ջանքերով հրատարակվեցին ասորական առաջինից երրորդ դասարանների համար մայրենի լեզվի դասագրքեր։ Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, Հայաստանի լուսժողկոմատը բարելավեց ասորիների շրջանում տարվող կուլտուրական շինարարությունը։ 1924—1925 թթ. Հայաստանի ասորական հինգ գյուղերում կային դպրոցներ, որտեղ ուսուցումը տարվում էր մայրենի լեզվով։ Հունական դպրոցներում, ծնողների ցանկությամբ, ուսուցումը տարվում էր ռուսաց լեզվով։ Գիրքը և թերթերը արագորեն մուտք էին գործում ազգային փոքրամասնությունների գյուղերը։ 1924 թ. ադրբեջաներեն լեզվով լույս էին տեսնում «Ռանչպար», «Կոմունիստ», «Բենչի», «Ենի-ֆիկր» թերթերը։ Ռուս մալականների շրջանում տարածվում էին Մոսկվայում և Թբիլիսիում հրատարակվող ռուսերեն թերթերը, իսկ հունական և ասորական գյուղերում՝ Բաթումում և Հյուսիսային Կովկասում հրատարակվող հունական և ասորական թերթերը[28]։

Այսպիսով, Հայաստանի կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ Հայաստանում բնակվող ադրբեջանցիները, հույները, քրդերը և ասորիները տնտեսական և կուլտուրական զարգացման լայն հնարավորություններ ստացան։ Հին կարգերից ժառանգություն մնացած ազգամիջյան գժտությունների և փոխադարձ անվստահության փոխարեն ստեղծվեց ազգությունների խաղաղ համակեցություն։

Ազգային փոքրամասնությունների աշխատավորները մասնակից դարձան հանրապետության հասարակական, քաղաքական և կուլտուրական կյանքին։ Նրանց բնակության վայրերում ստեղծվեցին մայրենի լեզվով գործող դպրոցներ, դատարաններ և իշխանության օրգաններ։

---

24 Նույն տեղում, գ. 371, թ. 50։

25 «Խորհրդային Հայաստան», 1921, № 258։

26 «Խորհրդային Հայաստան», 1923, № 157։

27 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 166, թ. 14։

28 ՄԼԻ վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, գ. 669, թ. 36։

Սոցիալիստական տնտեսության կազմակերպումը նյութական հիմք հանդիսացավ ազգային փոքրամասնությունների մեջ փոխօգնությունը, բարեկամությունը և ինտերնացիոնալիզմը զարգացնելու համար։ Արևավառ Հայաստանում ապրող բոլոր ազգությունները լենինյան ազգային քաղաքականության դրոշի ներքո, անխախտ բարեկամությամբ իրար հետ կապված սկսեցին աշխատել ու ապրել խաղաղ ու համերաշխ, հանուն սովետական հայրենիքի հետագա բարգավաճման ու հզորացման։

Г. Л. Макинян

РАБОТА С НАЦИОНАЛЬНЫМИ МЕНЬШИНСТВАМИ В АРМЕНИИ В ПЕРВЫЕ ГОДЫ СОВЕТСКОЙ ВЛАСТИ

Резюме

В результате националистической политики дашнакского правительства в период 1918—20 гг., большая часть азербайджанского и курдского населения Армении вынуждена была покинуть ее пределы.

После установления советской власти они возвратились в возрожденную страну и получили возможность всестороннего экономического и культурного развития.

Азербайджанцы, малакане, айсоры, курды, греки, представляющие национальные меньшинства, получили со стороны правительства Советской Армении и местных органов материальную помощь для быстрого восстановления своего разрушенного хозяйства. При содействии партийных и государственных органов, национальные меньшинства были вовлечены в экономическую и культурную жизнь республики. Для них были созданы школы, суды, администрация, в которых делопроизводство и учеба велись на родном языке. Создание социалистической экономики послужило материальной основой для взаимопомощи, дружбы, интернационализма.

Все нации, живущие в Советской Армении под знаменем ленинской национальной политики, связанные между собой нерушимой дружбой, начали мирно жить и трудиться на благо Советской родины, ее дальнейшего процветания и еще большего укрепления ее мощи.